

ՎԱՐԳԱՆԱՅ ՎԱՐԳԱՊԵՏԻ

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ԱՄԵՆԱՅՆ ՏԻԵՉԵՐԱՅ

Ոսկիփորիկ ԼԹ. էջ 282-306:



Սյա աշխարհացոյց է ամենայն տիեզերաց, Հայոց և Հռոմոց և ամենայնին:

Նախ քան զամենայն խնդրես յուրք եղեալքս զլին, և ապա զի նըմանէ եղեալքս. զի թէպէտ արարածքս պատճառ լինին զիտու թեան արարչին, զի արարածովքս ճանաչի արարին ըստ Պաւլոսի թէ « Անեղեայթը նորա ՚ի ըսկըզբանէ արարածովս իմացեալ ճանաչի », և ըստ Գաւթի թէ « Երկինք պատմեն զիառս Աստուծոյ », այլ առանց զիտու թեան արարչին՝ անօգուտ է զիտու թիւն սոցա. զի արարածովքս ճանաչեն զարարին, յայնժամ կարի գեղեցիկ է քննութիւն զոյնցս:

Արդ, ինքն Աստուած պատճառ է. և ինքն է բնութեամբ բարի և միայն իմաստուն: Հայր և Արդի և Սուրբ Հոգի. Հայր ծնող, Արդին ծնունդ է Հօրէ, նախ քան զյաւիտեանս, և Սուրբ Հոգին բխումն ՚ի Հօրէ անսկզբնաբար: Մի բնութիւն է երկոյ անձանց, անձամբ և անուամբ յատկացեալ և էութեամբ միացեալ, զուգափառ և համագրասիւ. մի աստուածութիւն և մի կամբ և մի թագաւորութիւն: Ոչ կամեցաւ ինքն միայն վայելել զիւր առաւ բարին, այլ շարժեալ սիրով իւր բարի կամացն՝ և գոյացոյց զարարածս, զիմանալիս և զգալիս. և է ինքն միայն անեղ, յետ նորա՝ ամենայն եղականք են:

Նախ խորանն անմատոյց, ուր կոյ ավտոն աստուածութեան, ՚ի վերոյ է

քան զամենայն էութիւն. ուր որ կարէ եղական արարած՝ մտաւել կամ մտանել ՚ի խորանն այն, այլ ինքն միայնակ սուրբ երրորդութիւնն, բնակեալ ՚ի ըստ անմատոյց: Եւ յետ նորա հրեշտակաց կոյանքն. նախ Աթոռոց դասուց, Սերորէիցն և Քերորէիցն, որ ճանապարհ կան ՚ի փառաբանութիւն Աստուծոյ, զի տեսաննն զլուսարն Պատրիարքայ և սապուածութեան, և կայսերայ կան ՚ի սէր նորա, և ոչ կամին զհեռանալն ՚ի նմանէ. ոչ տեղական հաստումն, այլ կարմաբ և սիրով, զի անմարմին բնութեանն տեղի ոչ ստի. այլ տեղի նոցա կամին և սէրն, զի ուր և կամին անց լինին. և այս երեք դաստ անգեաւ և փառք մի են: Եւ յետ նոցա՝ Տէրութեանց, Ծորութեանց, Իշխանութեանց, դառնն միջին քահանայապետութեանց. և յետ սոցա՝ Պետաց և Հրեշտակապետաց և Հրեշտակաց դասն, վերջին քահանայապետութեանց: Այս վեց դասք՝ զանապուն (են) տեղեաւ և փառք, ոչ բնութեամբ, զի բնութիւն մի է ամենեցուն, այլ փառք զանազանն. սրպէս մարդիկ՝ ամենեքեան մի են բնութեամբ, այլ փառք զանազանն. զի ամն թագաւոր է և ամն իշխան և ամն քաղաքապետ, և (որ) ըստ կարգի: Եւ է կոյանք նոցա լուսեղևն երկինքն՝ որ հաստատուն կոյ և անշարժ. և սոյա ջրեղևն կամարն հաստատեալ բանիւ արարչին, և նա շարժի անգազար՝ ըստ նմանութեան անուի. և կս

չի սա առաջին շարժումն։ Եւ յետ սորա՝ հաստատութեան երկիրքն, որ տնի անխիւ աստեղս, որք զնդաձև շարժին՝ որպէս զըտոր ձիթահանուց՝ ՚ի վերայ երկու բևեռ աստեղաց . և ՚ի քսան և չորս փամն՝ մի անգամ՝ շարժի։ Եւ յետ սոցա եօթն ժուրականաց գօտին, որ իւրաքանչիւր ՚ի նոցանէ ունի մի մշրական . ուր վերինն է Էրեւակն, Լուսնիթաղն, Հրատն, Արեգակն, Լուսնաբերն՝ որ է Ռուստեակն, փայլածուն և Լուսինն՝ ՚ի ներքոյ ամենայնի, զոր արջազդէրն տնուն կոչեն սոցա . Զոհայն, Մուշիթարին, Շաման, Մարեխն, Զաւհահան, Աւտարիտն, Ղամարն։ Եւ սպա յետ սոցա չորս տարերքն, որ զնդաձև պատեալ են զմիմեանս։ Աւաջին բոլորակութիւն՝ հրոյն, որ պատեալ ունի զամենայն տարերս . և ապա օղն, և սպա ջուրն, և ապա երկիրա՝ ՚ի ներքոյ ամենայնի և ՚ի մէջ ամենեցուն։ Եւ զերկիր՝ զի անշարժ կոյ՝ այլայլական արար Աստուած, զի մի աստուածութեան կտրժիս տացին, վասն պիտոսիցն՝ որ ՚ի նմանէ բխէ։ Եւ երկիրքն՝ զի անապական է՝ շարժական արար Աստուած, զի մի վտան անապականութեանն Աստուած համոքեացին . այլ և շարժականէն զշարժոյն իմացին, որ անշարժ դորով՝ շարժէ զարարածս ՚ի կեանս ՚ի փրկութիւն . զի զգալի բնութիւն ոչ շարժի յինքննէն, որպէս ըզքար ջրագացին, այլ յայլմէ . ինքն անշարժ բնութիւն է օ

Եկեացուք յերկիր . այլ նախ ասացուք զի կիրիկնաձև է աշխարհս, բարբ և բառանկրեւի . և դրախան Ագամայ ՚ի վերայ երկրի է՝ ՚ի բարձրաբերձ բեմիք, և չորս իւրք պատեալ է զդրախարն և զյամուք երկիրս . նախ Ովկիանոս ծովն և Լեւիտիթան ձուկն, ընդդէմ կալով կահակացն Ովկիանոս . և ՚ի կողմն արևմտից զտուան և զգլուխն ՚ի միտանդ է եղեալ։ Եւ ապա Քեօսինոս կղզին, զի և նա բոլորածիր կղզի է ՚ի մէջ երկու ծովուն։ Այլ յՈվկիանոս ոչ գոյ կենդանի՝ բաց ՚ի Լեւիտիթանէն, և ամէն օր երեք մեծ վիշապ ձուկ՝ կերա-

կուր առաքէ նմա Աստուած . զի ծովն սոյն հարթայտաակ է և նաև ոչ կարէ գնալ ՚ի վերայ նորա։ Այլ ՚ի կողմն արևմտից՝ պատստեալ է զՔեօսինոս կղզին, և իբրև զգետ գոյ առ Ովկիանոս ծովէն և ՚ի նմանէ լցուի։ Անդնդական ծովն բնակին կենդանիք, և նաւորքք գնան ՚ի վերայ նորա։ Եւ Անդրդական ծովէն՝ բաժանի դէմ Հերակլեայ արձանին, և որպէս զլայնահաս գետ գոյ յառաջ . և ՚ի նմանէ կազմի Միջոց-աշխարհիս ծովն . զի և նա որպէս զբոլորածիր պատեալ է զմիջոյ աշխարհիս, այլ ոչ հաստաբ, որպէս զի՝ գոյ տեղի զի ցամաք է, և ոչ են կցեալ յիւրար։ Զի ՚ի հիւսիսոյ կողմանէ Հուսոնոյ ծովն Պանդոսիւ, և հասանէ ՚ի կովկաս լեռան, ուր պարիտալն է Ալեքսանդրի, և ապա Կազրից ծովն՝ յարեւելից կողմանէ պատէ և գոյ մնա ՚ի յերկիրն Պարսից . և ապա Հնդկաց ծովն հասանէ ՚ի կարքեգոն կղզին։ Եւ ապա Եգիպտոսի ծովն գոյ հասանէ յարևմտեան կողմանէ ՚ի Բիւզանդիան և յայլ սահման նորա, մինչև ցիսուաց աշխարհն։ Եւ ՚ի յայդ ծովէն բաժանի բազում խորչս ծովուց, և կղզիք բազում . ՚ի կողմն արևմտից՝ Կիպրոս և Կրիտէս, Սիկիլիա և Պագոմոս և Բուստոս կղզին, և այլք . և ՚ի կողմն հարաւոյ՝ Փարիեդոն կղզին և Շիրմարան քաղաքն, որ է Հրմուլի մէջ ծովի, ուստի պատստեական մարգարիտն ելանէ։ Իսկ ցամաք երկիրս բաւ ուղիղ ըրծից յարեւելից յարևմուտս երեք բաժանի . կողմն հարաւոյ՝ Լիբիա կոչի, միջոյ աշխարհն՝ Ասիա ասի, և հիւսիսոյ կողմն՝ Եւրոպիա։ Իսկ Հայաստան աշխարհս խառնեալ է Ասիոյ և Եւրոպիոյ . սկսեալ նախ ՚ի Դրանէ Հոնաց, որ է դուռն Ալանաց՝ երկաթի, զորեւեալ է Ալեքսանդր Մակեդոնացի . զի նա ժաղովաքս յամենայն ազգաց զիտանաբիւ և զկարճահասակս, զխեղս և զկաղս, զկոյրս, զգոյս և զլինաստկարս, և տարեալ ՚ի կողմն հիւսիսոյ բնակեցոյց, և պարտեալ սմարցոյց, և եգդուռն երկաթի . և մարդարէացու ՚ի վերայ դրանն, թէ յորժամ յետին դա-

բէն անցանի ութհարիւր վաթսուէն և չորս ամբ, անկանի դուռն այն. և ելաւնէն քսան և չորբ թագաւորք և ապականեն զաշխարհս. Աճուճաց և Բաճուճաց ազգ կոչեցեալ, զոր Աւետարանիչն Յովհաննէս Գոգ և Մագոգ ասէ, վասն անթիւ բազմութեանն:

Ալիօն քաղաքն յարեւելք է, ուր կանայք նստէին թագաւորք, որ Ամազունից աշխարհ անուանի, զոր ոչ կարաց անուուլ Աղեքսանդրն Մակեդոնացի: Գուգարացիք Շաքի է. Ալանք՝ Շրուան է, որ ասորուչան շինեցաւ և կոչեցաւ Շրուան և Շամախի: Աւտա՝ ՚ի մտից կայ Երասխայ, ՚ի մէջ Արցախայ և կուր գետոյ, որ է Քուռ գետն՝ զոր Աղուանքն ունին, ուստի էր Աւտայ՝ իշխանն Տըրգատայ, ուր մեծ եկեղեցին է ամարասուռ, ուր կան նշխարքն Գլիգորի Աղուանից կաթողիկոսին: Արցախ՝ խաչէնք է. և ՚ի յԱրցախ սուրբ ուխտն Դիլդախայտն, Դիլդայ է և վարանդայ: Գաւճաճակ՝ կանջայ է, իւր վիճակոյն և Զակամոյն՝ մինչև ՚ի դաշտն Գազայ. և կան ՚ի նմա սուրբ ուխտն Խորանաչատ, և Եղիշէ առաքելոյն աթոռն է: Գանճասար՝ ուր կայ գլուխ սուրբ կարապետին: Գարդման գաւառն՝ Քարթմանիկ է, ուր կայ գերեզմանն Յոհաննէս վարդապետի Մայրազուճեցուն: Մեծ Սիւնիս և Փոքր Սիւնիս, ուր կայ սուրբ աթոռն Եւստոթէի առաքելոյն, որ կոչի Տաթեւ և Ծիծեռնա վանք: Եւ Բաղաբերդն՝ ուստի էր Յոհաննէս կաթողիկոսն ՚ի Բաղայ, որ հալածեցաւ ՚ի Վասպուրական: Սաթից գաւառն՝ Ծարայ երկիրն է: Գեղամայ՝ Գեղարքունի է, ուր կայ սուրբ ուխտն Մաքենիս. և Սեան կղզին ՚ի մէջ ծովուն, և այլ բազում գաւառք ՚ի կողմին հիւսիսայ՝ որ կոչի Զակամ, ուր կայ սուրբ ուխտն Խորանաչատ, Հոգարծին և Գեռակ վանքն, ուր աթոռն է Փօշ վարդապետին:

Այրարատեան գաւառն (է) բազումն: Արշակունիք և Զորն Երասխայ՝ կաղըզուն է, ուր կան սուրբ ուխտն Վարդիկ-Հայր և կարմնաձոր, և սուրբ

Թաթլու Անապատն, ուր զԹուճաս առաջնորդ կացոյց: Անդ է և դաւառն Գարեղնից և Աբեղէնից, և Բերդն կապուտ, որ կոչի Արտագէթէից. անդ է և կեչաւրայի քաղաքն և Ծառաքարի վիմափոր քաղաքն, ուր կայ գերեզման կեչառացի Խաչատուր Վարդապետին: Եւ Բասն գաւառն սահմանակից է նըմին: Բագուանդաւանն՝ Բաղրանոյ բերդն է, ՚ի վերայ Ախուրեան գետոյն, զոր Երուանդ շինեաց և անդ փոխեաց զաթոռ Հայոց թագաւորացն, և զեղբայր իւր Երուազ՝ ըուրմն կացոյց կըռոցն: Աւանն՝ Գեղայ քաղաք ասէ:

Արագածոտն, Նգասունն, ուր կան սուրբ ուխտն Թեղեհիս և Եղիպատուրէ: Եւ ՚ի միւս կողմանէ երկիրն կարբոյ, ուր կան սուրբ ուխտն Սաղմոսավանքն, ուր կայ Արագած Սուրբնշանն, և Օձահալած Սուրբնշանն, և սուրբ Բեեռն աջոյ ձեռին, և սուրբ աջն Նախավկային, և սուրբ կողքն՝ սուրբ կարապետին՝ որ ՚ի վերայ արտին է ՚ի կենաց փոյտէն՝ ուր արիւնն Քրիստոսի ներկեալ է. Ատտուածընկալ Սուրբնշանն Գոռու Սուրբնշանն, Տէրուճական Սուրբնշանն. Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին աջն, սուրբ Յակոբայ Տեառնեցորն մատն. և գերեզման Ականատիս վարդապետին, որ ՚ի հայցմանէ և ՚ի խնդրուածոյ նորա, ամառնային եղանակին՝ լոյսն վառի ՚ի վերայ սուրբ խաչին, որ զգալի աչք տեսանի՝ ՚ի պորձանս հայկազնի: Եւ Յովհաննայ վանք, ուր կայ վարչամակն Քրիստոսի, և Տիեզերավանքն, լրջակապուտ ակն Սուրբնշանն, և Գոչկոյ վանքն և Խաչի վանքն. այլ և զիւրն Մուղնի՝ Սուրբ Գէորգն, ուր կայ ծնուն և դադան և տկանջն և արիւնն սուրբ Գէորգոյ զօրավարին. և այլ բազում վանք:

Իսկ ՚ի հիւսիսայ կողմանէ Արագածոյ է երկիրն Շիրակոյ, յորում է մայրաքաղաքուք Անի, աթոռ Բաղրատուճանաց թագաւորացն: Զորոյ գետն յԱնի է. և Շիրակ գաւառն՝ ուր կան սուրբ ուխտն Հոռոմոս և Մարմաշէն և Գաբրավանք և Հոռիճա, և սյք բազումք:

կարոյ երկիրն և քաղաքն յԱնու երկիրն է. վանանդոյ է կառուցեր Ղեւանդ վարդապետն. Գողթանն և վանանդ ուրիշ է ։ Եւ 'ի դաշան Այրարատեան՝ է սուրբ Էլմիածինն, որ է վարդաբազատ քաղաքն, աթոռ թաղաւորաց Հայոց Մեծաց ։ Եւ Գաւին քաղաքն նման նմին. և Արտաշատ քաղաք՝ ուր կայ խոր վիրտան, տեղիք շարչարանացն սրբոյն Գրիգորի սուրբ Լուսաւորչին՝ 'ի մեջ Օձիցն երեքուստան ամ. և յետոյ բերաւ մարմինն Սուրբ Լուսաւորչին, ձեռամբ Գրիգորի Մագիստրոսի 'ի կուսանդնապօսէ, և եղաւ 'ի վիրապին ։ Եւ 'ի բերան վիրապին կան հանդուցեայ շիրինք երկու՝ մեծ, հռչակաւոր եռամեծի և տիեզերաբոյս վարդապետացն վարդաճոյ և Ներսիսի Շինողին. և իղարուզտի վկային նշխարքն այլ տեղ կայ ։

Իսկ 'ի կողմն Գառնոյ՝ Դարունէից Բեկեղեցին է, Հաւուց թառ, ուր կայ կենդանակերպ պատկերն փրկչական, և սուրբ աջն թաղէս առաքելոյն ։ Եւ Այրի վանքն, ուր կայ Գեղարդն աստուածամուխ ներկեալ արեամբ կենսարին, և տախտակն սուրբ տապանակին Նոյեան նահապետին. և նա է տուն հաւատոյ Հայաստանեայց՝ հաստատեալ 'ի Լուսաւորչէն ։ Եւ Աղջոյ վանքն, ուր կայ սուրբ աջն Ստեփանոսի քահանային, և սուրբ աջն Արիստակիտի, որդւոյն Գրիգորի սուրբ Լուսաւորչին ։ Եւ մայրաքաղաքն Գառնի, ուր կայ գերեզման Գեորգոյ Հայրապետին և Մաշխոց վարդապետին, և գեղեցկաչէն և զարմանալի թախան Տրդատայ թագաւորին, կտայք՝ երեւան է, քաղաքն՝ իւր վիճակովն, և Չազավանքն անդ է, ուր կայ գետարգել սուրբ Նշանն, և սուրբ Սարգիս և սուրբ կիրակոսի աջն ։ Եւ ունի Այրատ գետ. Հուրաստան՝ Բջնու շուրն է, Քասախ գետ՝ Կարբու շուրն է, Ազատ գետ՝ Գառնու շուրն է, Ախուրան գետ՝ Անու շուրն է ։ Վայոց ձորն՝ Եղէգէոյ ձորն է, ուր կայ կենսաբեր Սուրբ Նշանն և Հերմոնի վանքն. և կայ անդ նշխարք Սիւնեաց Տէր Ստեփանոսին 'ի թանհասի

վանս ։ Եւ Գալոյ ձորն, ուր աթոռն է և վարժարան սուրբ վարդապետացն մերոյ ։ Գողթան զաւառն՝ Ազուլիս է Զուղայոյն, Արապատական և Գանձակ շահաստան՝ Դավթէժ է. զտալինն շինեաց զնա Խոսրով, Հայրն Տրդատայ, և անդ նստեալ՝ առնոյր զվրէժ արեանն Արտաւանայ՝ զեղբորորդոյ իւրոյ, զոր սպան Արաաշիր՝ որդին Սասնայ, և տասն ամ աւերեաց զտունն Պարսից, և կոչեաց զանուն քաղաքին Դաւթէժ. յետոյ Հուլայու Խանն նորուգեաց, վասն որոյ Հուլայու թախտ կոչի այժմ. Խրամ քաղաք՝ Շամբի ձորն է, ուր կայ նախավկայն սուրբն Ստեփանոս, Հեր և Չարեանդ զաւառն՝ Խոյ է. Արաազ՝ Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն թաղէս ։ Հացունեաց գաւարն մտ է 'ի Նախմուսն քաղաք, ուր Սիւնեաց Տիկինն շինեաց վանք, և անդ եղ զմասն 'ի կենաց փայտէ, զոր առ 'ի Հերակէ, յորժամ ազատեաց ըզխան 'ի գերութենէն Պարսից, և տալու 'ի թարվիզու 'ի Ստամպու ։ Ի Նախմուսն է ապանն մեծ նահապետին Նոյն, և Նոյեմկարայի կոնչն իւրոյ (Նոյի) 'ի Մարանդ ։ Յաղաքի և Սալամուստ երի կալով դոցա, ուր կան նըշխարք Բարդուղիմէոսի սուրբ առաքելոյն, և 'ի յՈրմի քաղաք՝ Յուդա Յակութան ։

Իսկ 'ի հիւսիսոյ կողմն՝ Հաճի-թարխան՝ է Հայտարխանն, Չանկզզանի աթոռն է հիւսիսական ազգին. և գայ հասանէ մինչև 'ի կովկաս լեան, աւախի ել ազգն թաթարաց ։ Հոգթագա թանն՝ է որդի Չանկզզանին, որ եկն նստաւ 'ի յԱլանք, և գերիս որդիսն առաքեաց 'ի վերայ երեք բաժին աշխարհիս. զՄանկու թանն առաքեաց 'ի վերայ Խորասանայ, և զԱրղու թանն 'ի վերայ Հոռոմոց, և զՀուլա թանն 'ի վերայ Հայոց և վրաց և Բարբելացոց, և աւին զարւր աշխարհս ։ Վրկանի աշխարհն՝ կիրիմ է, ձգի մինչև 'ի Կարթից ծովն. և ապա դաշան Գաղգայ, ուր կայ սուրբ Սարգիսն, և Մչկավանքն և Մակարայ վանքն. և բերդն կայեն և կէժոն ։ Ի վե-

յնչ Սեաւ արդեաց՝ Զորք-գետին՝ ին
 զիննալ հայապալ է հաշտեալսր սուրբ
 ուրախի Հայրաւս և Սանահինն, զոր
 շինեաց խնայութեամբ խնայուհին, կինն
 Մշտաց արքայաժին ՚ի չորերհարիւր և
 տասն թեաւհանդերձ Տաշրացոց դաւաւան՝
 Բաւաթակի ձորն է ՚ի արկայ սուրբ ուխտն
 Ուխտաձորու Մուրք-Նշտան : Տաշիր՝
 Ընտի է, արկայ Բորայրն է Հաւաւ-այւ-
 ըի Սուրք-Նշտան, ՚Յոհանն Աճնեցուն
 դերեզմանն : սրանցեղարքով տարի հայ-
 յանպետին, որ եհանն ՚ի վերին աշտար-
 հէն վարդն Հոռոմոց, հրատնտաւ Քե-
 մար անլիմանին, վտանայով զի ՚ի խան-
 դարմանէն (?) եղրի հաթեւսկիտին, որ
 հաւանեցաւ Հերակղոյ, այն՝ որ աղա-
 տեաց դիտան, որ վեց ամ գերի եկաց
 ՚ի թարսիզ. որ զից կաթուղիկու ութ-
 սունն և չորս ամ Գաղիբեզունի դաւանա-
 թեանսն յոտան յաթու սուրբ Բուսն-
 լորին՝ մինչ ՚ի Յոհանն Աճնեցին, որ
 կարգեաց զչորս սուրբ տօնա, և ասոց
 զԲեղաբ ասեանային ՚ի տօնի Գաւթայ
 մարգարէին : խորխաւունին՝ Խոչուռի
 է իւր վեհակոմիտի փայտակարան՝ Տրի-
 խիտ է. վարդանակերտ՝ Տիխեաց վե-
 հակն է : Ափխազք՝ Մոպթիմաց աշ-
 խարհն է, Եգրե է վրայ աշխարհին :
 Մծիխիմ արածիրալքարան է վրայ :
 Ասուկէտ՝ Սևրդլաւ է իջանաց եր-
 կիրն է օժնալ խաւն սուր հայրապե-
 տին Ներսէսի, որ այժմ Ահարա կուի :
 Տայոց գաւառն ՚ի վիրտ է. Խալիբ դա-
 ւաւան՝ սահմանակից է Տայոց, և այլք
 բարգուճ :

Գաղիայ՝ Գաղարն՝ Արկրուժ է, որ
 կուի թեպոպոլիտ, զոր սրբապետաց
 Կեապաւարն փարքն թեպոպոլս : և էին
 վերակայաբ գործոյն Մոլիէս թերթօ-
 դըն և Գաւթիժ Մեյրապիժ փիլիսոփայն :
 Աղաւթիտն և Գալիբերունի՝ Արճէշ է,
 արկան սուրբ ուխտն Արճաւար, և
 Մեծոփաց վանքն և Առնկարու Սուրք-
 Նշտան աննապարս Բազրեւանդ դա-
 ւաւան Մանածկերտովն՝ վաղարկակերտ
 կայի Ապահահար, և անդ զհաց ընդ-
 առաջ սուրբ Կառաւորին թաղաւորին
 Տրգասոց, մինչ ՚ի քաղաքն Բաղուան,

առ արին եկիրաւ դեառն, ՚ի սաղարտ
 Նպաս ընթինն և ինչ մկրտեաց զիտն
 դաւարն զօրքն խրափել Ստեփանն և Տար-
 բերաւնի՝ Բերկլի է, արկայ սուրբ ուխ-
 տն Տէր Գաւթայ սրգոյն ՚ի Տապարաւ-
 կան վան էր արկան արաբ ուխտն
 վարագայ, արկայ սուրբ Նշտան զոր
 երեք Հալիսիսիէ կոյան և Ե Զարափոնի՝
 որ է Մայնապոտս Գաւաւարն կն վա-
 պուրականի երեսուն և վեց : Ռշտունիք,
 Ռոտան, Տաւա, Անձեացիք, Կարաբաճ,
 որ կայ ուխտն Հոգոց վանք. սուր կնն
 դանապիք պապկեցն է Արտասամ
 ճին, զոր երեք Բարդուղիմէոս պա-
 թեան : Անդ է և Տրգաս թագաւորն և
 Ալիէն ակիկինն և Գաւրովիգուխաւ : և
 կուի սա Հաշաէն դաւաւս, Կառափ երան-
 դեան Տիգրիս, որ է Գկկաթէ և Ե Անձեա-
 ցեաց՝ էր եպիսկոպոս Մեծն Խոսրով,
 հայրն արքայն Գրիգորի Նարեկացոյն :
 Տրգասունիք, Երտանդոնիք, Մար-
 դասանն, Մեհան, Ալիէ Նեան, Արտազ,
 Աղբակ Մեծ և փոքր, այսպիկ ամե-
 նոյն վասպուրական կուին և և յԱրշ-
 տունեաց դաւաւան կան սուրբ ուխտն
 Նորեկ, Նկարէն, Անձրճնապատ, Կ-
 Յակոր, Սուրք վաղարան, անդ է և Տը-
 կոյիմ սուրբ հայրապետին Յակոբայ
 Մծքնայ և վանք մի կայ Նկարէն ա-
 տնն, որ ունի շաղ ՚ի յԱտաւեճոյ ՚ի
 շափ աւտարանի մի ՚ի գոյն աղեղա-
 կին՝ հանգեց սուրբ սեղանոյն, և անդ
 է նշխարն Թումայի առաքելոյն և Ե
 Աղիտանար կղզին, որ կայ սուրբ խաչ
 հրաշտագոր, զոր շինեաց Գաղիկ թա-
 դաւարն Արճուռնի : և Աղճնիս՝ առ Տիգ-
 րիս գետովն կայ կարգեաց ըստան՝ կար-
 ճէից ըստան է, որ և այժմ կարճէք ու-
 սի անսն աշխարհին այնմիկ :

Մսկաց դաւաւան է իշխանանիտա,
 որ կան բազում վանորայք. նախ Ա-
 մենափրկիչ, որ կայ գերեզման թա-
 դաւորին Մոդոյ՝ Գաւապարայ, և սուրբ
 վարդանայ, Ե Սուրք կանոնց վանք,
 որ այժմ առ Սուրք խաչ, առափ էր Ա-
 նանիտ կաթուղիկոսն Մոկացի : Բլնու-
 նիք՝ Արճիէ է, խալի և Բաղէշ և Հի-
 դան. այս չորս քաղաքս իւր երկրովն

Բզնուները կոչի եւ յԱրժկէ կայ սուրբ ուխտան Երանկարգործ, և անդ է սուրբ ուխտան Երանկարգործ, և ոչ՛մ աւերակ է: Եւ ՚ի խլակ է Մասնէլանն, և թեղ զուր սուրբ Յովաննէս, ուր կայ գառն մուշկեղէն սուրբ կարապետին, և սուրբ խաչն քար, օծեալ ձեռամբ սուրբ Լուսաւորչին: Եւ ՚ի խիզան կայ Սուրբ Խաչ և Գամաղիէլ և Բարի-ձոր: — Տարաւն՝ Մուշ է, ուր կայ սուրբ ուխտան Մշու Սուրբ կարապետին, և կայ անդ նշխար Աթանազիկնէս սուրբ եպիսկոպոսին և Եթովն խոտածարակայն և սուրբ ճգնածորայն Ամոնի և Կրօնիդոս, և կայ Գրահայ վանք, վասն անաթուրդի հօրն Գրահայ: և զառաջին պատարդոսն անդ արար անբն Գրիգոր Լուսաւորչին: Եւ Ղազարոս վանքն Մշու սուրբ առաքեալն է, ուր կայ ձառն յՊետրոսի և Պաւլոսի: զոր երկր Լուսաւորչին Գրիգոր, և այլ բազում որբութիւն: Եղբրդուտի վանքն Սուրբ Յովհաննէս է: ուր կայ ՚ի նշխարաց սուրբ Կարապետին, և շիշ իւղոյն՝ զոր երկր թաղէսու առաքեալն եւանդ պատհանց, և Լուսաւորչին եղիտ վանքերն, Սուրբ Աղբրեկին է: Երկնայ նեալ խաչն Տիառնեգորէն Բակարոս ՚ի զառապին խաթոյ. անդ է և սուրբ Բեռնոն ներկեալ արեամբն Քրիստոսի:

Արժրուները՝ Ոսառն է, զոր շինեաց Սանատար, որդին Սենեքերիմոյ, որ փախուցեալ ՚ի Նինուէտ՝ վտան սպանման հօրն եկեալ թաքտուպն Հայոց կողմովիտ և Մանանկայ-Փորն ՚ի Սուսն է, և անդ է ճիւղն Պետրոսի ուսերկոյն: Իսփայ գառառն՝ Մեծկերտ է և Չիլիլաճակ է: Տիգրանակերտ՝ Հասմիթ է, զոր պարագետ Տիգրան՝ թաս գաւոր հայկազնի, յորժամ սպան զԱթաղահակ՝ Մարաց թապաւորն, և զբոյն իւր զՏիգրանուհի՝ որ կին էր Աթաղահակոյ՝ էսժ անդ, վասն քուերն շինեաց դրազաքն, և յետոյ նորոգեցաւ ՚ի Մեծէն թէպոսէ: Ի լեռանց Սասնոյ մինչև ՚ի Մեղիկոյ Հայոց, որ է Մաղաթիա, այս ամենայն միջոցս Միջագետտի, զի ՚ի մէջ եփրատայ է և Տիգրիս գետոյ: Եղեպիս՝ Աւրոս է, ուր բնիւս

անձեռաղիր պատկերն՝ որ ՚ի սուրբ գասառակէն:

Աւարտ թուրքաւան է, և ՚ի Ռիբոս՝ Հուշեղ է. իսկ ՚ի միւս կողմննէ Ման գախունի՝ երէ կտրւլ Տարանց: Սուրբ ձանք՝ կեղի է. Եկեղեցայ գառառն՝ Եղբնիան է, ուր կան Ներսիսի և Երեստակէսի սուրբ հայրապետացն: Քերեղմանքն ՚ի թիթն անտի և Եղբնիաբարբապատ լեւանբոյն՝ քաղում վանն. քաղք և բազում արքայ գամբարաք. զի Մեծն Ներսէս քառն և սեթ անբառնի վանք շինեաց, և քաղում մասունք ժողովեաց և եղ ՚ի զանրայանն Եւլիայ յեղբնկան Ներսէս հայրապետին սուրբ անն և երկր մասն ՚ի սուրբ կեղեց քառան, Չարարիայի քահանային արիւնն, Պանդալեւսի բժշկին մասն, Կողմայի և Գամիամասի մասն, և սուրբ կարապետի առամունքն և Կասանկերանոսի թաղապին խաչն, և Քրիստոսի փնչ պատկն, Կոյնան սասալանին մասն որ խաչ է: Ընայուցեալ է Մի Նիկողոսոսի Չմիւռնեցւոյն մասն, թէպարտութ անն և մասունք, և ոչլ բողոքոյն զոր ՚ի թիթարկանի ոչ կարեմ Գործանաղեաց գառառն իսմառն է: և որ կոյղեղեղման սուրբ Լուսաւորչին ՚ի թորթման արգանցն և թոռանց նպին, և Եթաղան, Գամիկի, Գառալի ճիթաւորին, Սուրբայ եպիսկոպոսին, և այլ քաղում քերեղմանք սրբոյն՝ որ անդ կան: և Սասառաճաքեաց լեռան Սեպուհ, ուր հանդեռ սուրբ Լուսաւորչին և անդ Կոյ հոս հայալն թուրն Տրդատոյ, որի եւ նին կոտածող խառն թաղաւորն: և յորժամ ինդիւր տար Տրդատ թաղաւորն Լուսաւորչին, և գնացեալ Եղբն զնա ՚ի լեռան Սեպուհ, և նա աւաց նմա զմեծութն աղբին Արշակունեաց, և տոնալ զթուրն օծեաց որպէս զխաչ և եղ յօգն բանիւն Ռասաւոյ, և ասաց յերանել Արիսիան աղբին՝ երբեք նշանաւայս, զոր աւետար շրջեցաւ ցաննն ընդ ինքեանս: և ինքն անդ վերապիտեցաւ սոս Ռասաւոս Եւ անդ կայ վանք Սերոյրեղեց. զոր սերոյրէն սասառեաց Առաւած ընդ հրեղէն քերպի:

բէին յանդնդային ձորն, որ եղեալ էր 'ի մտի երթալ 'ի վերայ ծնկացն յերուսաղէմ, որ արգելաւ 'ի կիզմնող սերովբէիցն. յոր յետոյ Պուզ վարդապետն Յոհաննէս շրիեցաւ 'ի տեղինն, և ել 'ի գլուխ լերինն՝ զոր այժմ Գոհա նաւթ ասեն՝ Սեպուհոյ ծայրին. և ետես զգալի աչօք զնշանն զայն և համարուրեաց և առաց Այսոր զուրաձացնայ Անձինքն, և զլերինքն 'ի վերայ նորա, ըստ այնմ՝ թէ Զէն արքայական սպանման գործի կենաց արքայինն. Եւ մերձ նորա կայ հուշակաւոր սուրբ ուխտն Աւագ վանք, զոր հիմնարկեալ է թագէտ առաքեալն, և կայ 'ի նշխարաց թագէտոսի սուրբ առաքելոյն զլուխն, և զարմանալի դեղթափն, և Պետրոսի առաքելոյն մասն, և Բակիրայ Մժբնայ հայրապետին ասամմ՝ 'ի վերայ դեղթափին, և այլ բազում մասունք: Եւ մերձ նորա կայ վանք ուրբ Եակորայ և սուրբ Սիոն, որ կայ 'ի Փոսի, ուր կայ ներքին ծնօտն սրբոյն Եակորայ՝ Մժբռնայ հայրապետին, և Եովաննու կարագետին, Տկոյթն, և սրբոց առաքելոյն թագէտոսի մասն և Բարդուղիմէոսի բոթիւն: Եւ 'ի Գէորդայ վանքն կայ մասն սրբոյն Գէորդայ պօրավարին, և այլ բազում վանքեր տիրալէն, և բազում սրբոց վարդապետաց դամբարան և սրբոց մասունք կան յեզրնկան:

Աթախ և Հենի, Դերջան և Բայու, ուր զգիրն եզիտ Մեսրոպ վարդապետն. այսորիկ Արշակունիք կոչին: Ի համախ է անառիկ բերդն, յոր պահեաց յառաջարակն Տրդատայ և Խոսրովիլիստայ՝ զՏրդատ և զըրոյն իւր և զգանձն և զկուռս թագաւորացն Արշակունեաց, յահէ Արտաշէին՝ որդւոյ Մասանայ. և 'ի դալն Տրդատայ թագաւորին՝ փառօք ելանէ ընդառաջ նորա: Եւ գետն Եփրատ՝ յեկեղեաց պաւան է. մի ակն յԱրզրում և և երկրորդ ակն 'ի Արձէշ 'ի Սուրբ Ոսկէնիցն. ելանէ, և անցանէ ընդ Տարօն, և գայ անցանէ ընդ Ասորեստան, ընդ Հոռոմոց և Պարսից սինօն: Սիբաստիա՝ Սեւաստ է, ուր կան սուրբ Գա.

ուսուհքն, և գետն Ալիս. անդ է և մարմին Պետրոսի Գեսաղարձին՝ 'ի Սուրբ-Նշանի վանքն, զոր շինեաց թագաւորն Սենեքարիմ. և Հրեշտակապետ և այլ բազում վանորայք կան 'ի Սեբաստիա: Մաժակ քաղաքն և կապաղովկիտ և Գամրայ տունն՝ Բարսեղ կեսարացուն քաղաքն է, որ է կեսարիա. ուստի էին սուրբն Գէորդ և Մարգիտ նահատակն Քրիստոսի. և սակոյի Առաջին Հայք. Եղնկան և կամախ՝ իւր վիճակովն մինչև 'ի Մուշ՝ երկրորդ Հայք: Մուշայ դայտէն՝ Ալեթամարայ ծովի բոլորովն, Մոկայ, Խեղանովն մինչև 'ի Ղլմիթ՝ Չորրորդ Հայք. և Այրարատ՝ Մեծ Հայք: Զայս վաղարշակ առաջին թագաւորն Արշակունեաց այսպէս բաժանեաց. զի 'ի դալն թագէտի առաքելոյն զԹէոփիլոս աշակերտն իւր եպիսկոպոս ձեռնադրեաց Առաջին Հայոց. և վանն այդ պատճառի անդ դնաց Լուսաւորիչն, և էառ զձեռնադրութիւնն 'ի Ղեւոնդիէ՝ իւր իւրմէ առաքելոյն, և այնպէս առնէին Հայք մինչև 'ի ժողովն Գաղկեդոնի: Այս այն թէոփիլոսն է՝ որ 'ի Ղուկաս Աւետարանչէն խնդրեաց զԱւետարանն և ըզգործս Առաքելոյն, և նա ելից զհայնցուածս նորա, և գրեաց զԱւետարանն և զգործս Առաքելոյն, որպէս ասէ. կարգաւ գրել քեզ, քաջ թէոփիլէ: Եւ անտի երբ լուսաւորիչն վնշխարս սուրբ կարապետն և զԱթանազիէի հայրապետին, և հանգոյց 'ի Տարօն՝ պարգևեալ նամ 'ի Ղեւոնդիէ պատրիարքէն, և սուրբ ճգնաւորքն Անտոն և կրօնիդէս 'ի սպասաւորութիւն նշխարաց սուրբ կարապետին, և ուսուցիչ ճիւղաբարարոյ ազգին Հայոց:

Կիլիկիէ՝ որ է Սիս, 'ի մէջ կայ Արթրոց և Գամրայ. ունի քաղաքս և անտանի տունն և բերդս բազումս, և զբերդն կոպիտաւոյս, և զԲարձրբոգ՝ մօտ 'ի Մոլեան. և վանորայս՝ զԴրասղարկն, զԱրքակաղնին և զԳառնեթոս սուրբ ուխտն, և զՊկեւեռնայ անսպասան, և այլ բազում վանորայս: և զվամբոս ուսանն, և զմայրաքաղաքն ու.

նի զՏարսուս, որ է Սիս, և զՄարաշ: — Այս են գաւառք և աշխարհք Հայոց, զոր փոքր 'ի շատէ զրեցաք:

Իսկ 'ի կողմանէ Պարսից' սկսեալ յարեւելից' նախ Զին և Մալին, և խու- լեայ քաղաք և աշխարհն, և են զին բու- լոր աշխարհիս. որ են ուղղափառ քրիս- տոնեայք, և ունին թագաւորութիւն և քահանայութիւն, և ունին արդար դա- տաստան և ճշմարտութիւն. ոչ որքն լայ և ոչ այրին յոգոց հանէ. և ունին գիրք միայն զՄատթէոսի Աւետարանն դուռի. և պարարտ է աշխարհն, բարե- խառն և բարելի. մի անգամ սերտաննեն և չորս տարի հաց լինի, քանզի մտա է է. 'Իրախտին. անտի գոյ ամպարն և անուշահոտ ծաղկունքն, դեղ զանա- զան ցաւոց: Եւ անտի դայ 'ի փուշա- նաց երկիրն, և ապա 'ի ճննաց, ուս- տի էին ազգն Մամիկոնէից. երկու եղ- եղբարք Մամակ և Կոմակ, փախու- ցեալք 'ի ճննբակիբոյ' եկին առ թագա-ւորն Հայոց՝ Արաաշէս. և նա վասն քա- յութեանց նոցա՝ կարգեաց զօրավար Հայոց գնդին, և կոչեցան Մամիկո- նեայք. ուստի էր քաջն Մուշեղ, որ կո- տարեաց զգորս Պարսից գնդին՝ աղօ- թիւք սուրբ հոյրապետին՝ Ներսիսի 'ի դաշան Նպատակ, որ Ապաշի դաշտ կոչի այժմ. և սուրբն վարդան՝ թառն է նորին: Եւ այնպէս փարթամ է ուզն ճննայ՝ զի կերպաս զգնեուն առհասա- բակ ամենեքեան: — Եւ սպա երկիրն և ազգն թետալացոց՝ որ սահմանակից է Խորասանայ՝ յեզր Հնդկաց ծովուն:

Իսկ աշխարհն Պարսից՝ Խորասան, որ ասի Արեւելք. Նուշաուր քաղաք՝ ուր ամօտն է Պարսից թագաւորացն, ուր սուրբ Դեռնդեանքն նահատակեցան և երանելի Մոզպեան՝ որ հաւատաց 'ի Քրիստոս: Ղեւոնդեանց նահատակու- թեամբն, և հրամանաւ թագաւորին քարան 'ի Կուրան և 'ի Բագուրան՝ Խո- բին Խորասան, և ընկեցին 'ի վիրադ. և նա խնդրեաց յԱստուծոյ զի մի ծած- կեացի նահատակութիւն նորա. և ել Յուր յատակս խորոյն, և այն է Տար- մաշուրն, և ուր որ տանին՝ և տարմը

հաւուց զհետ երթաննմա անդանդազ:

Բալխ և Բատալիս, անդ գեղեցիկ լաճվարդն ելանէ, զոր առին ազգն Ար- շակունեաց և Պալշաունիք կոչեցան. Հրէ և Մարաւա, ուստի գեղեցիկ ա- պըրչումն ելանէ. Ելտա՝ ուստի ազնիւ զումանն ելանէ. Շիրազ, Դում և Քա- շան, Ղազվին, Յաէ և Շահրիար և Մա- զանդարան. և գոյ հասանէ մինչև 'ի Սուլթանիա քաղաքն Պարսից, և Ա- բաղ կոչին առհասարակ: Եոչ քա- ղաքն՝ Սպահան է, ուր Դանիէլ մար- զարէն զտեսիլն ետես, և կեալ ընդ կիւրոս թագաւորին Պարսից, և իմա- ցիք և Մոզուց ազգն՝ Պարսից ազգն է. Նարստան և այլ բազում՝ քաղաքք, զորս անօգուտ համարիմ գրել:

Մմբղանդ՝ ամօտն է Նեոսպաց աղ- դին, յոյնկոյս Սարանկոյս գետոյն, որ Զահան դեա և Ամուսու անուանի, որ այժմ ֆաջպալաչ կոչի անուն ազգին: Սպաստան երկիրն՝ Պարսից աշխարհն է, մտ 'ի Համիան քաղաքն:

Իսկ գաւառք Ասորոյ և Մարաց՝ Եկ- բասուն՝ Ամեսիէ, ամօտ ազգին, Մա- ռաց, յորում թագաւորն Սարգանա- բազոս սպան զԱրբակոս Մար, և յետոյ Նարուզդոնոսոր քակեաց գնա՝ Նի- նուէ է՝ զոր շինեաց Նինուաս, և զիւր անուն եղ 'ի վերայ քաղաքին: Նինոս թագաւոր՝ որ ունէր կին զՇամիրամ, որ երկուցեալ 'ի կնոջն՝ փախեաւ յԵլ- լադա. և նա առաքեաց առ Աբա թա- գաւորն Հայոց՝ զի երթիցէ առ նա և լինիցի նմա այր. և նա անարգեաց ըզ- նա, և ոչ կամեցաւ գնալ. և Շամիրամ բազում դօրաք եկն 'ի վերայ Աբայի, և պատերազմեալ սպան զԱբա, և ինքն թագաւորեաց Հայոց ամս հնգեաա- սան. և շինեաց զԵբրդն վանայ: և կո- չեաց զանուն քաղաքին Մարաստան. զոր յետոյ Երուանդ փոխեաց, և կո- չեաց զանուն քաղաքին Երուանդաւան. յետոյ հրամանաւ Արաաշէսի զԵրուան- դըն բարձին և մնաց անուն քաղաքին վան. և յետոյ որդիքն իւր սպանին զՇամիրամ: Եւ մինչև Նարուզդոնո- սոր 'ի Նինուէ նստէին թագաւորքն Ա-

արդար, և նա 'ի Քաղաքն փոխեաց զա-
թառն, զդին Նաբուքադոնոսորայ՝ հայր
հայրասարայ :

Յկողան և Քաղաքն՝ Պաղատա է, զոր
նիչ շինեաց և անուանեաց Քաղաքն, և
յետոր Նաբուքոդոնոսոր պարագեաց
զնա : Սքաթ ի Արամիս Վճրին է, որ
այժմ Նիսիպիւն կոչի, ակժա է արդոյն
Յակոբայ : Մուճ քաղաքն 'ի Միջա-
գետս է, սաաթի էր Յակոբ Մրճեցին :
Սաքաթ՝ Շուրահայ է : որ եզին ա-
ռաքեալքն հինն հուսացոյ՝ է քաղաքն
Անաթոք՝ ակն տեղեցեաց : և անդ ա-
նաանեաց զհաւատացեալսն՝ Գրիստոս,
նեայ : և Կրտսիս կոչի անուն աչ-
խաքնն՝ մինչև 'ի Հոսովայն, որ ա-
թուն է կրտսիս անոր հայրապե-
տոցն սերաց Գրիստիսիսնից և Ներսի-
սեանց : Գառնակա՝ Յմբի է, և Արամ՝
կոչի անուն աշխարհին այնմիկ :

Իսկ Հուսոնց աշխարհին քաղաք են
այսքովի : Անաթ՝ Նիկիոր է, որ վի-
ճակն է Գրիստիսի Նիւսոյն : Սինոպ՝
մարդակերպ աշխարհն է, որ դնաց
Մասթիէլա, աւետարանիչն և Ողորտա-
ստորեղն : Ձիւտին քաղաքն Նիկիա-
ցոյ՝ Վալիր է, որ Յ Արարիա (?) Նիկո-
ղոսոս հայրապետիկ քաղաքն է : Գիւ-
ղանդիս՝ որ է Քրտանոց, Տիգրանիան
խաղաղութն շինեալս և յետոյ իրոտոն-
գիսանոս թագաւորն նորոգեաց զնա, և
անուանեաց յանուն իւր Կոստանդնու-
պոլիս : Կարտաւաճաղաքն՝ քաղաք և բը-
նակն լինել և հաւաքարանն յանեայն
արդոյ : և անդապան թագաւորին Ֆր-
րիստոսի Ասաղոց : որպէս 'ի վերայ
անդրի միոյն փայլ կանգնեաց (Կոստան-
դիսանոս) : 'ի Վիճի՝ քաղաքին է, և նդ 'ի
անդրին անն պիտի զամբեղաոր ըսան
յորնեայն հարկն՝ Գրիստոսի : 'և 'ի վի-
րայ տեանն պիտի կանգնեաց, և յամ-
ճեան պատկերին՝ խոյն և դրեաց 'ի վի-
րայ խաչին : թէ Գրիստոս Աստուած 'ի
քեղ՝ յարմն անն զքաղաքս զայս :
'՝ Ասիա՝ Եփեսոս է իւր թեմնիս, որ
ժողովն է Յոհաննոս : Գառնակա
աւետարանիչն, զոր աւերեաց Գառն-
ակաքաղաքն 'ի Պատմա կղզին, որ

եակա զանախն առուածային, և զը-
րեաց զաւետարանն և պիտիպետ կա-
խարդն ծովառոյգ արար, և յեա աթ-
ևտան ամի զարձա յիվեսոպ 'ի Վի-
ճակն իւր, հրամանա Ներսեանայ ար-
քային : Եւ 'ի շարից Աւետարանաց ա-
թուաց, որ է առաջինն Անաթոք Աստ-
ուաց, որ Մասթիէա գրեաց զԱւետա-
րանն՝ յեա եօթն ամի վերանալոյն
Գրիստոսի, յերայնցի լեզու : Երկրորդ՝
Ալեքսանդրիա, որ է Արանասարիա, զոր
շինեաց Ալեքսանդր Մակեդոնացի, որ
Մարկոս գրեաց զԱւետարանն՝ յեա
եօթնեկուսն ամի վերանալոյն Գրիստ-
ոսի 'ի խաթի լեզու : Երրորդ՝ Կաղմա-
տիա, որ Դուկոս գրեաց զաւետա-
րանն՝ յեա քսան և երկու ամի 'ի Ֆը-
նոնոք լեզու : Չորրորդ՝ Եփեսոս, ա-
թուն Յովնանիս Աւետարանիչն, որ
գրեաց զաւետարանն յեա եօթնեայն
ամի ամի, 'ի յայն լեզու, զոր յետոյ 'ի
Ստամբոլ փոխեցին :

Քննադոնովիկ՝ Մակեդոնիա է, ու-
տի էր Ալեքսանդր Մակեդոնացին :
Պիլլոպոսիդա և Արիա՝ Կորնթոս է
իւր թեմնիս : Գաղատիա՝ Անկուրիա է
Ելլագա՝ երբ կապ Մակեդոնիաց 'ի
մէջ Պեղապոսիցն : Լաւոզիկ՝ Լաւոզիկ
քաղաքն է : Նիկովիզիա և Ամասիա եր-
կուսն թագաւորանիս քաղաքն է 'ի
ապին Հասոնաց, Աթիւք քաղաք՝ որ
ծովեզերն կայ : որ վարժարանն խնա-
սասիրաց : Բիւրլիսան ասի թէ Պալ-
պար է :

Յուդայա, ժողովոյն՝ որ եկն զինն
երեքհարիս թեմնեաւան ամի ճընըն-
դեանն թրկչին Տեաւան մերոյ Յիսուսի
Գրիստոսի, եղև ժողովն Նիկիայ 'ի տաս
ձերորդ ամի թագաւորութեանն Կաս-
տանդիանոսի : և պատրարքուք ին
Սիդեպոնիոսի՝ Պիդեպոնիոյն : Արկա-
տակոս և գուրն Յակոբ Մճրնաց, և
Նիկողայոս 'ի Չմիւսնիայ, և այլք բա-
զուք, երկրորդ ժողովն յեա եօթն
հասուն և յորս ամի 'ի խաղաղութեանն
Մեծին թեմնիս 'ի Ստամբոլ,
եղև ժողովն հարիւր և յիսուն ասոր

հայրապետացն, և դիտար էր՝ Ներսէս 'ի Հայոց և Գրիգոր Աստուածաբունն, և այլք բազումք: Երբորդ ժողովն յեա՛ թասն և հինգ ամս. եղև ժողովն յԵփեսոս, երկու հարիւր սուրբ հայրապետացն, յերկուասուներորդ ամս թաղաւորութեանն թեողալի փառքս: Ընդդէմ՝ Նեաւորի: և դիտար էին Կիւրեղ Աղեքսանդրացին, և Սահակ 'ի Հայոց՝ լիզիծով միաբանեաց, և այլք բազումք:

Փիղշո՛ 'ի հորաւոյ կողմն է Երուսաղեմի, դաւառ այլազգեաց, սբ կոյ ծովային, սբ մի եղիւրն բժշիէ (?): Երուսաղէմ՝ քաղաք՝ զոր շինեաց թաղաւորն Սաղիմ, հայրն Մելքիսեդեկի, և յետոյ Յիշաա կոչեցաւ, զոր էտա Դաւիթ և արար քաղաք թողաւորուկան՝ Անդ եղ զտապանակն և զայլ սրբութիւնն, և անդ տաճարն Աստուծոյ շինեցաւ 'ի Սողոմոնէն, և երբ ոսկի երինձք Արարիւց և այնա զարգարհաց զտաճարն. և անդ եկն զշեղջն հարսաւոյ՝ լսել զմտաւորութիւնն Սողոմոնի: Էք անդ է բոլոր անօրէնութիւնն Գրիգորսի՝ որ կտաարեցաւ, անդ և դառաւտան իննելոց է՝ 'ի վարն Ռեւալ յի առաջին մարդն անդ յտեղծաւ, և Ասեղծոն անդ մարդ եղև:

Քարբայթա՛ Եփեսոս է, որ է Բեթղահա՛ն, Մոքթա և Քիքար, և Սիլբեմ՝ Սամարիա է. Ազովտոս և Գազա և Ասկաղոն և Ակիարոն՝ դաւառք են այլազգեաց 'ի կողմն հարաւոյ Երուսաղեմի: Բերրոն՝ դամարունն է Նահապետացն, որ եղան յայրին Սիկիմոյ:

Ափրիկէ՛՝ փունիկէ է, և ունի զՀրէաստան աշխարհ, զԳալիլիա, զՍամարիա և զԵդոմիա. և յիճո երկուս՝ զՏիբեքեաց և Մեռեսալ ծովն, և դեան Յորդանոսն անցանէ ընդ այն, և ունի քաղաքս բազումս, և զմայր քաղաքացն Կերուսաղէմ:

Եգիպտոս՝ որ է Մըսր, որ դնաց Գրիստոս և փախստական արար զաբութիւն ազգին Եգիպտացւոց, և մանակ մատաղ՝ արկեալ զձեռն իւր 'ի ծակ իմին, և անկեալն սաստանոյ 'ի

փառացն՝ անգ եղ զափռուն իւր, այլ՝ և զալն Գրիստոսի՝ կարծանեցաւ ակնունորա, և ծաղկեցաւ անապատն Եգիպտոսի իբրև զլուսա Աստուծոյ:

Հերմուպոլիս մաս յեգիպտոս է, և յուսալն անգ վնայ Գրիստոս 'ի տուն ոչբ ըն կնով միայ, սբ լուսաց և պատեպոց շար մանակով և ատոց. հմանն է մայր քաւարակեկ և դաւման արեքափան, և այլ բազում գոյալթիւն և եւ զվեցամ յեգիպտոս եկաց Գրիստոս Տէրն, մեր: Էւ լուսոցման ջորն՝ ուր թափեաց Աստուածամի՛նն, անդ յուսաւ ծառ և տունկ պալատանի: — Աղեքսանդրիա քաղաք յեգիպտոս է, զոր շինեաց Աղեքսանդր Մակեդոնացին, որ ակնու է Մարկոսի Աեսաբանչին: — Թեբայիք և Սիլիմ և Սինու անապատն՝ յեգիպտոս է, ար բնակութիւն է սուրբ ճրգոնորարք. և գրաւոր Կրիստոս անգ է զոր շինեցին կախարչն Յանէս և Յամիէս դամո հնչեալասան շարչարանօք որդւոցն իսրայելի: — Էւ Տափնասա քաղաք՝ ուր զԵրեմիա քարկոծեցին. և այլ բազում անապատաք և քաղաք կոյ անգ:

— Արարիա ազգաւաճի իրի կալով և Եգիպտոսի և արևմտեց և Կարփիք թովանչ զոր անդ իարայելս Արարիա փոքր ունի աշխարհս. երկուք զՏափնասա և զՓառնոթիա. զՄարթա, զԿ և տունն Ռերահամա կոչնն: — Սիլիմիա՛, որ Թուրք անուանին, ուստի սկսանի սահմանք նոցա, 'ի Յաթիլ դետոյ մինչև 'ի Մօր ընտն. և ունի աշխարհս՝ Թուլսաբի, Հեփթաղք և այլ խաժամուճ ազգ:

Իսկ աշխարհին Հնդկաց աթոռն են, առաջինն՝ Սինաիտասանկ քաղաք, որ եթին տակ պարիսպ ունի, ամէն պարսպի յէջ հարիւր հազար տուն, որ է՝ Եթինհարիւր հազար, և նա ակնու է Հնդկաց թողաւորացն, զոր Արեւնէր և Յովասափ նստէին. Երկրորդ ակնու՝ Մինդան է անուն. և երրորդն. Բետար, և ունի երկու գունն ծովուն, և առաջին զոնովն 'ի վերայ Հրմուկու գան իսրասանու վաճառականքն. և երկրորդ զոնովն 'ի վերայ Կարբեդոն կղզոյն գան 'ի Բաբելոն: — Արառա,

ցւոց անապատն 'ի Հնդասան է, ուստի եկն Բարդամ ճգնաւորն և լուսաւորեաց զՈվասափ: — Եւ 'ի կողմն արևմտից հարաւոյ Հապաշաստան է, և ամօռ թագաւորաց նոցա՝ մայրաքաղաքն Եթովպիտ:

Իսկ 'ի կողմն արևմտից՝ Ֆրանդաստան է. և Սպանիա է երեքանդիւնի, ուր նշխարք Յակոբայ առաքելոյն, և անդ է բովն սոկեհանաց, ուր չարչարեն զմահապարտաւ Եւ յարևմտից կողմանէ գնայ հաստնէ յԱկանացւոց աշխարհն, և անտի 'ի Պղնձէ քաղաքն, որ աւերակ է այժմ, և նա կոչի Լիւրիկէ, որ է Եզր աշխարհի՝ ուր գնաց Պաւղոս: Եւ ապա աշխարհն Ալամանաց, ուր կայ Եզր Աստուածածինն. և են նոքա յազգէն Արշակունեաց՝ արիական ազգէն Տրդատայ, զոր խնդրեաց կոստանդիանոս, և Տրդատ պարգևեաց նմա չորեքհարիւր մարդ: — Գերմանացւոց աշխարհն՝ երկ կալով Գաղղիոյ, հիւսիսային ովկիանոսիւ: Դաղմատիա՝ երկ կալով Գաղղիու՝ ակամբք Դանուբոյ գետոյն: Իսալիա յարևելից Գապղիու, Դաղմատիու հարաւոյ կուսէ:

Մեծն Հոսմ, զոր շինեաց Ռամելուս թագաւորն. ուր կան սկունքն աշխարհի՝ Պետրոս և Պաւղոս, որ ամօռ և պատրիարքարան է Լատինացւոց, որ են Ֆրանդք: — Եւ չորս ամօռք կան

յարևմուտս. Հոսմ և Միլան, Անկլիա և Փարէզ, և երեք քաղաքն՝ ամօռ են աշխարհակալ թագաւորաց, և Փարէզ քաղաք՝ դասատուն վարդապետաց: — Եւ ապա յայնկոյս Դանուբոյ գետոյն՝ ազգն Գոթաց, և ապա Ռուսաց, որ Մոսկոֆ է անուն քաղաքին, որ է ամօռ ազգին Ռուսաց: Եւ Ռւլանաց ազգն ստհմանակից է նմին. և ապա ազգն Պուլղարաց գայ հասանէ 'ի Սարմատայիք և Սուրմատայիք և 'ի Վիրսոյսոքիկ ամենայն յարևմուտք են 'ի կողմն հիւսիսայ:

Թրակաց աշխարհն 'ի յարևելից կողմանէ Դաղմատիու ունի. և Թրակիա քաղաք ունի աշխարհս եօթն, գետք և քաղաքս և կղզիս. և քաղաքն Սաման, դրիտ և 'ի վերայ Լաւվայ և Սելովայն՝ գայ հասանէ մինչև 'ի կոստանդինուպոլիս:

Եւ վենետիկն ամօռ է և 'ի մէջ ծովն, ուր քրմիսքարն բանի և զարծամբն սոկի ներկէ:

Ջի երկոտասան ազգք և լեզուք Ֆրանկն է, ութ Հոռոմն, և վրացին է ութ: — Եւ Յաւշինթոս քաղաք է 'ի Թրակիա, մօտ 'ի Ստագիրս, ուստի Արիս, աստէլն էր: Եւ այլ բազում ազգ և քաղաք և աշխարհ, զորս անօգուտ համարիմ շարագրել. վասն որոյ ոչ կամեցայ գրել, զի այս բաւական է մեզ:

